



ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԲԱՂՎԱԾ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՖԵՆՈՄԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարիա Սահակյան, Լուսինե Կարապետյան
Երևան, 2021թ.



Ամբողջ աշխարհում աղքատների մի զգալի մասը, զբաղված լինելով տնտեսության տարբեր ոլորտներում, այդուհանդերձ, անկարող է ապահովել սեփական բարեկեցությունը:



Թեև ՀՀ-ում աղքատության և զբաղվածության հիմնախնդիրների վերաբերյալ առկա են բազմաթիվ հետազոտություններ, սակայն զբաղված աղքատների ֆենոմենը բազմակողմանիորեն ուսումնասիրված չէ:



Սույն հետազոտության արդյունքում ներկայացվել են մի շարք առաջարկություններ, որոնք կնպաստեն այս ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը:

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԲԱՂՎԱԾ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՖԵՆՈՄԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարիա Սահակյան, Լուսինե Կարապետյան
Երևան, 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ	4
1.1 Արտասահմանյան մասնագիտական գրականության ակնարկ	4
1.2 Հայրենական մասնագիտական գրականության ակնարկ	6
2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	8
3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	9
3.1 Միջազգային փորձ	9
3.2 Չբաղված աղբատները ՀՀ-ում	13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	20
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	21

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հետազոտությունում ներկայացվում են «**զբաղված աղքատներ**» կամ «**աշխատող աղքատներ**» եզրույթների սահմանումները, մի շարք երկրների, միջազգային կազմակերպությունների կողմից այդ հասկացության հաշվարկման մեթոդաբանությունները, դրանց առանձնահատկությունները, զբաղված աղքատների վերաբերյալ վիճակագրությունը, ինչպես նաև արտասահմանյան երկրներում և ՀՀ-ում առկա հիմնախնդիրները:

Հայաստանի Հանրապետությունում չեն հրապարակվում «Չբաղված աղքատներ» խորագրով տեղեկագրեր կամ վերլուծական զեկույցներ, իսկ վիճակագրական տվյալները և գիտական հետազոտությունները սակավ են, այդ իսկ պատճառով հիմնահարցի ուսումնասիրությունը հույժ կարևոր է ու արդիական:

Օգտվելով ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված միկրոտվյալների բազաներից (ըստ տնային տնտեսությունների, տնային տնտեսության անդամների)՝ սույն հետազոտությունում հաշվարկել ենք ցուցանիշներ, որոնք թույլ են տալիս բազմակողմանիորեն ներկայացնել վերոնշյալ երևույթը:

Հիմնաբառեր. զբաղված աղքատ, աղքատություն, աշխատանք, աշխատավարձ, սոցիալական օգնություն, կրթության մակարդակ, աղքատության գծեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղքատության և դրանից բխող բազմաթիվ բացասական երևույթներն արդեն մի քանի տասնամյակ է՝ գտնվում են միջազգային կառույցների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կայուն զարգացման նպատակների իրագործման և ՀՀ-ում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, իրականացվում են հետազոտություններ՝ ուղղված աղքատության հաղթահարմանը (ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր):

Տարիներ շարունակ տարածված է եղել այն տեսակետը, որ աղքատության առաջացման պատճառներ կարող են հանդիսանալ աշխատատեղերի բացակայությունը, աշխատելու անկարողությունը կամ ցանկության բացակայությունը և այլն:

ՀՀ Կառավարությունը մշտապես կարևորել է նոր աշխատատեղերի ստեղծման ու խթանման, ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը (ինչը, իհարկե, կարևոր է), սակայն ոչ բավարար ուշադրություն է դարձվել **զբաղված աղքատների** հիմնախնդիրների ամբողջական լուծմանը: Մեր կարծիքով՝ նման մոտեցումն անարդարացի է, քանի որ աշխատել ցանկացող և աշխատունակ անձն այդուհանդերձ չի կարողանում ապահովել իր և իր ընտանիքի բարեկեցությունը: Այս ֆենոմենի պատճառները կարող են բազմաթիվ լինել, սակայն բնակչության արժանապատիվ աշխատանքի և համաչափ վարձատրության ապահովումը հրամայական է:

Վերոնշյալ ոլորտում հետազոտությունները ցույց են տալիս, որ ամբողջ աշխարհում աղքատների մի զգալի մասը, զբաղված լինելով տնտեսական գործունեության տարբեր տեսակներով և պետական ու մասնավոր հատվածներում, այդուհանդերձ, անկարող է ապահովել սեփական բարեկեցությունը: Ընդ որում, զբաղված աղքատների հիմնախնդիրը բնորոշ է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներին: Հիմնական տարբերությունն այն է, որ զարգացած երկրներում պետական նպաստների և սոցիալական աջակցության այլ ձևերի միջոցով աղքատների մեծ մասը կարողանում է ապահովել բարեկեցության որոշակի մակարդակ, բայց զարգացող սակավաթիվ երկրների է հաջողվում վարել նման սոցիալական քաղաքականություն:

Իրականում զբաղվածությունը պետք է լինի այն հիմնական միջոցը, որը թույլ կտա հաղթահարելու աղքատությունը, սակայն սա արդարացված է միայն այն դեպքում, երբ ապահովված են աշխատանքի արժանապատիվ պայման-

ները և անվտանգությունը, ինչպես նաև իրականացվում է աշխատանքի համարժեք վարձատրություն (International Labour Organization, 2019, April): Չբաղված աղքատների հիմնահարցը պատմականորեն և մինչ օրս առավել խոր հետազոտվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների հետազոտողների և վիճակագրական կառույցների կողմից, ընդ որում՝ վերոնշյալ հիմնահարցի վերաբերյալ պատշաճ գիտական հետազոտություններ կատարվել են դեռևս 1960-ականներին (Eurofound, 2004: 6), մինչդեռ, եվրոպական գիտական համայնքը դրան անդրադարձել է բավականին ուշ՝ 1997 թ., երբ ներդրվեց Չբաղվածության եվրոպական ռազմավարությունը, ինչպես նաև հետագայում սկսեցին իրագործվել Լիսաբոնի և «Եվրոպա-2020» ռազմավարությունները (Cymbrowicz, 2018: 66):

ԱՄՆ-ում առավել հաճախ կիրառվում է **«աշխատող աղքատներ»** (working poor), իսկ եվրոպացի հետազոտողների կողմից՝ **«աշխատանքային աղքատություն»** (in-work poverty) եզրույթները (Lohmann, Marx, 2018: 1-2):

Ըստ ռուս գիտնական Վ. Վ. Ռադանի՝ նախկինում, երբ քննարկվում էր այս հիմնախնդիրը, **«աղքատություն»** հասկացության ներքո հաճախ նկատի էին ունենում միայնակ մայրերին, տարեցներին, հաշմանդամներին, գործազուրկներին և բազմազավակ ընտանիքները, սակայն իրականում աղքատ կարող են լինել նաև աշխատողները: Հեղինակը նրանց անվանում է **«նոր աղքատներ»**: Վերջիններս ունեն լրիվ դրույթով աշխատանք, բայց աշխատավարձ ստանում են որոշակի ուշացումներով, կամ էլ նրանց աշխատավարձն այնքան ցածր է, որ չի բավականացնում արժանավայել կյանքի համար (Радаев, 2000: 25):

Հայրենական գիտական շրջանակներում վերոնշյալ հիմնահարցը բավականաչափ խոր ուսումնասիրված չէ, հետևաբար, տվյալ ոլորտում գիտական հետազոտությունները թույլ կտան բացահայտելու «զբաղված աղքատ» հասկացության գիտական ընկալումները և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև վերլուծելու հիմնախնդիրը ՀՀ-ում՝ վեր հանելով կարևորագույն առանձնահատկությունները և ընդգծելով լուծման հրատապությունը:

Դիտարկենք զբաղված աղքատների վերաբերյալ միջազգային փորձը, աղքատության և զբաղված աղքատների հիմնախնդիր լուծման հնարավոր կառուցակարգերը, ինչպես նաև ուսումնասիրված փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում:

1

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՐԿ

1.1 ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՐԿ

Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), (International Labour Organization-ILO) գնահատականի՝ 2018 թ. աշխարհում զբաղված բնակչության 21%-ն աղքատ էր (International Labour Organization, 2019, April: 2):

Աշխատանքային աղքատության վերաբերյալ ԱՄԿ-ի առաջին գնահատականները հրապարակվել են 2001 թ. *Նոման Մաջիդի*՝ զարգացող երկրներում աշխատանքային աղքատության չափերին նվիրված հետազոտությունում, որում հեղինակը նշում է, որ թեև մի շարք միջազգային կազմակերպություններ ուսումնասիրում են աղքատության կրճատման հիմնահարցները, սակայն զբաղված աղքատների հիմնահարցը պատշաճ կերպով չի հետազոտվում: Ուշագրավ է հեղինակի տեսակետը, ըստ որի՝ եթե արդյունավետ սոցիալական նվազագույն երաշխիքներ ներդրած պետությունները վերացնեն դրանք, ապա կմոտենան զարգացող տնտեսությունների ցուցանիշին (Nomaan, 2001, May):

2002 թ. *Ստեֆան Բերգերը* և *Զլեր Հարաստին* իրենց համատեղ հետազոտությամբ անդրադարձել են զբաղվածության, գործազրկության և աշխատանքային աղքատության հիմնահարցերին, ինչպես նաև ներկայացրել են ՀՆԱ աճի այն մակարդակը, որը թույլ կտար 2000-2010 թթ. ընթացքում ընդհանուր զբաղված բնակչության մեջ կիսով չափ կրճատել զբաղված աղքատների տեսակարար կշիռը (Berger, Harasty, 2002):

2004 թ. *Սթիվեն Կափսոսը* ներկայացրել է աշխատանքային աղքատության հաշվարկման մեթոդաբանությունը, ինչպես նաև փորձել է բարելավել *Ստեֆան Բերգերի* և *Զլեր Հարաստիի*՝ աշխատանքային աղքատության վրա տնտեսական աճի ազդեցության մոդելը: Հեղինակը կարծում է, որ միայն տնտեսական աճը չի կարող լինել աշխատանքային աղքատության կրճատման ուղի (Kapsos, 2014: 26):

Աղքատության գնահատման և միջազգային իրավիճակի համեմատությունների համար սահմանվում է «*աղքատության միջազգային գիծ*» հասկացությունը: 2008 թ. աղքատության գծի միջազգային ցուցանիշը կազմել է օրական 1.25 ԱՄՆ դոլար՝ գնահատված ըստ գնողունակության համարժեքության հաշվարկի (PPP): 2017 թ. Համաշխարհային բանկը վերանայել է աղքատության գծի հաշվարկման մեթոդաբանությունը, ըստ որի՝ այն կազմել է օրական 1.90 ԱՄՆ դոլար

(գնողունակության համարժեքության հաշվարկով): 2017 թ. Համաշխարհային բանկը, աղքատության միջազգային գծից բացի, սկսել է կիրառել նաև ըստ եկամտի դասի աղքատության գծերը: Այս դեպքում զարգացման համանման մակարդակ ունեցող երկրները միավորվում են խմբերում, և վերջիններիս համար սահմանվում են համապատասխան աղքատության ցուցանիշներ: Այսպիսով, աղքատության մակարդակը գնահատվում է օրական 3.2 ԱՄՆ դոլար՝ միջինից ցածր և օրական 5.5 ԱՄՆ դոլար՝ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համար (Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2019a: 63):

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), (Organisation for Economic Co-operation and Development-OECD) երկրներում աշխատանքային աղքատության մակարդակը սահմանվում է որպես տնային տնտեսությունների եկամուտների մեդիանայի 50%-ից ցածր եկամուտ ունեցողների տեսակարար կշիռ (տնային տնտեսության գլխավոր անդամն աշխատունակ տարիքում է, կամ տվյալ տնային տնտեսությունում կա առնվազն մեկ աշխատող) (Аналитический центр при Правительстве Российской Федерации, 2017, октябрь: 5-6):

Համաձայն ԱՄՆ Աշխատանքի վիճակագրության գրասենյակի (U.S. Labour Statistics Bureau) սահմանման՝ զբաղված աղքատ է համարվում այն անձը, որը հաշվետու տարվա ընթացքում առնվազն 27 շաբաթ ներառված է եղել աշխատուժում (այսինքն՝ հանդիսացել է զբաղված կամ գործազուրկ, ակտիվորեն փնտրել է աշխատանք), սակայն վերջինիս եկամուտը դեռևս ցածր է եղել աղքատության պաշտոնական մակարդակից (U.S. Bureau of Labour Statistics, 2019, April):

Ըստ Ամերիկայի Միացյալ Նահանգների մարդահամարի գրասենյակի (U.S. Census Bureau) սահմանման՝ զբաղված աղքատ է համարվում այն անձը, որի ընտանիքի անդամները տարեկան կտրվածքով աշխատում են 1750 ժամ կամ ավելի (44 շաբաթ), սակայն գտնվում են աղքատության դաշնային գծից (բացարձակ դրամական աղքատություն) ցածր (Eurofound, 2004: 7):

Համաձայն Եվրաստատի (Եվրամիության վիճակագրական ծառայության) սահմանման՝ անձը համարվում է աշխատանքային աղքատության ռիսկի գոտում, եթե աշխատում է ավելի քան կես տարի, ինչպես նաև տարեկան տնօրինվող եկամուտը ցածր է տնային տնտեսությունների ազգային եկամուտների մեդիանայի 60%-ից:

Եվրաստատի վերջին տվյալների համաձայն՝ այս տարածաշրջանում աշխատողների շուրջ 10%-ը գտնվում է աղքատության ռիսկի գոտում (Eurofound, 2020, 04 June):

Ֆրանսիայի վիճակագրության և տնտեսագիտության ազգային ինստիտուտի (INSEE) դիտարկմամբ՝ զբաղված աղքատ է համարվում այն անձը, որը հաշվետու տարվա ընթացքում առնվազն վեց ամիս ներառված է եղել աշխատուժում (աշխատելով կամ աշխատանք փնտրելով), սակայն նրա կենսամակարդակը գտնվել է աղքատության մակարդակից ցածր (Peña-Casas, Latta, 2004: 6):

19-րդ դարում Ֆրանսիայում աշխատող աղքատների հիմնախնդիրը հասարակական շարժումների և մասնագիտական գրականության ուշադրության կենտրոնում էր, սակայն, սկսած 1950 թվականից, այս հիմնախնդրի վերաբերյալ քննարկումները գրեթե դադարեցին:

Տնտեսական աճը և երաշխավորված նվազագույն աշխատավարձի ներդրումը, թվում էր, թե վերջ դրեց աշխատողների աղքատությանը: Սակայն պետք է նշել, որ աղքատ աշխատողների հիմնահարցը 1990-ականների կեսերին և ճգնաժամային տարիներին, երբ գործազրկությունը դարձավ սոցիալական լարվածության հիմնական գործոն, կրկին հայտնվեց հասարակության և կառավարության ուշադրության կենտրոնում (Legros, 2019: 5):

Շվեյցարիայի դաշնային վիճակագրական գրասենյակը (Swiss Federal Statistical Office) զբաղված համարում է բոլոր տնտեսապես ակտիվ անձանց՝ անկախ աշխատած ժամերի քանակից, ինչպես նաև լրիվ դրույքով բոլոր զբաղվածներին (շաբաթական առնվազն 36 ժամ) կամ եկամտաբեր զբաղմունք (շաբաթական առնվազն 40 ժամ) ունեցող ընտանիքի մեկ անդամին: Միաժամանակ, աղքատ համարվում է այն անձը, որի եկամուտը ցածր է սոցիալական ապահովության վարչակազմի սահմանված դրույքներից: Վերջիններս հաշվարկելիս՝ Շվեյցարական համադաշնության սոցիալական հարցերով ինստիտուտի սահմանած կենսաապահովման նվազագույն միջոցներին ավելացնում են բնակարանի միջինացված վարձավճարը և առողջության ապահովագրության բազիսային չափերը (Eurofound, 2004: 7):

Իտալիայում աշխատանքով ապահովված լինելը, ինչպես (դրամական) օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ աղքատության առումով, նույնպես բավարար պայման չէ աղքատությունից խուսափելու համար:

Սուբյեկտիվ աղքատության վերաբերյալ Մ. Ֆիլանդրին, Ս. Պասկուան և Է. Ստրուֆոլինոն (2020) իրականացրել են մի ուշագրավ հետազոտություն, որը վկայում է, որ աղքատ տնային տնտեսություններում աշխատողները միշտ չէ, որ իրենց աղքատ են համարում և ընդհակառակը՝ ոչ աղքատ տնային տնտեսություններում աշխատողները կարող են իրենց աղքատ համարել: Հեղինակները կարծում են, որ այդ հակասությունները նախնառաջ կապված են տնային տնտեսությունների անդամների աշխատանքի կայունու-

թյան հետ, ինչը ենթադրում է, որ, ի թիվս այլ նախապայմանների, աշխատանքային եկամուտների կայունության գործոնը ևս կարևոր է: Այսպիսով, ըստ հեղինակների, տնային տնտեսությունները կարող են սպառումն ավելի արդյունավետ պլանավորել և կայուն կենսամակարդակ պահպանել, երբ ունենան կայուն աշխատավարձ (Filandri, Pasqua, & Struffolino, 2020):

Ռումինիայում անարդյունավետ զբաղվածության կառուցվածքը (ընտելագրվում է գյուղատնտեսության մեջ բարձր զբաղվածության մակարդակով, ինքնազբաղվածության մեծ տեսակարար կշռով, աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակով, բարձրագույն կրթություն ունեցող զբաղվածների ցածր տեսակարար կշռով), ինչպես նաև ցածր աշխատավարձի մակարդակն անմիջական ազդեցությունն են ունենում աշխատանքային աղքատության բարձր մակարդակի վրա (Bodea, Herman, 2014: 712):

Թեև մեր քննարկման առանցքում զբաղված աղքատներն են, այդուհանդերձ, տարաբնույթ նպաստների և բնակչության սոցիալական աջակցության վերաբերյալ դիտարկումը ևս կարևոր է, քանի որ, եթե ընտանիքում զբաղված է մեկ անդամ, ապա ընտանիքի մյուս անդամների ստացած նպաստները կամ սոցիալական օգնության այլ ձևերը կարող են ամբողջ ընտանիքը դուրս բերել աղքատությունից:

Ուշադրության են արժանի նաև ԵՄ երկրներում աշխատանքային աղքատության հիմնախնդրի լուծման առկա մոտեցումները: Այս համատեքստում անդրադառնալով ԵՄ երկրներում կիրառվող համընդհանուր նվազագույն եկամտին (General Minimum Income-GMI), որը մի շարք երկրներում ուժի մեջ է մտել որպես սոցիալական պաշտպանության փաթեթի մաս: ԵՄ անդամ պետությունները, բացառությամբ Յունաստանի, աջակցության այս տեսակը կիրառում են՝ կախված պետության կամ մոնիթինգի պլանի իշխանությունների ֆինանսական հնարավորություններից (Իսպանիա, Իտալիա): Երաշխավորված նվազագույն եկամուտը ֆինանսավորվում է հարկերի հաշվին և տրամադրվում է անհատներին՝ անկախ աշխատանքային ստաժի տևողությունից: Հարկ է ընդգծել, որ վերոնշյալ նպաստները թեև տրվում են անհատներին, սակայն կախված են տնային տնտեսության կազմից և եկամուտների մակարդակից (Eurofound, 2004: 65-66):

Լեհաստանում զբաղված աղքատների հիմնախնդիրների լուծման առումով ձեռնարկվել են միջոցառումներ և սոցիալապես խոցելի որոշ խմբեր ներառվել են Եվրոպական սոցիալական հիմնադրամի (European Social Fund- ESF) կողմից ֆինանսավորվող տարաբնույթ սոցիալական աջակցության ծրագրերում: Այդ խոցելի խմբերի թվին են դասվում քաղաքացիական պայմանագրերով ծառայություններ մատուցող, ինչպես նաև երեխայի խնամքից հետո աշխատաշուկա մուտք գործող անձինք (Eurofound, 2004: 84): Սոցիալական քաղաքականության եվրոպական ցանցի պետությունների համապատասխան մարմինների կողմից Եվրոպական միությունում աշխատանքային աղքատության

ցուցանիշների կրճատման նպատակով առաջարկվել են պետական քաղաքականության անուղղակի միջոցներ, մասնավորապես՝ երեխաների խնամքի ծառայությունների մատչելիության ապահովում, նպաստների տրամադրում, (Գերմանիա, Դանիա, Լեհաստան, Ֆինլանդիա և այլն), ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների բնակարանների և կոմունալ վճարների փոխհատուցում (Eurofound, 2004: 10-14):

Աշխատանքային աղքատության կրճատման ուղղություններին կարելի է ավելացնել նաև աշխատուժի մեջ ներգրավված (տնտեսապես ակտիվ) բնակչության ցկյանս ուսումնառության (life-long learning), մասնագիտական պատրաստման և վերապատրաստման ծառայությունների մատուցումը:

Վերջինիս օրինակ կարող է հանդես գալ Լյուքսեմբուրգը, որտեղ Եվրոպական սոցիալական հիմնադրամի (European Social Fund- ESF) միջոցներով մինչև 30 տարեկան և 45 տարեկանից բարձր տարիքային խմբերի զբաղված և գործազուրկ անձանց տրամադրվում են մասնագիտական ուսուցում (vocational training), սոցիալական ներառման և մասնագիտական հմտություններ (Peña-Casas, Ghailani, Spasova, & Vanhercke, 2019: 84): Այս գործիքը կիրառվում է նաև Լատվիայում՝ առավելապես բարձր տարիքի բնակչության մասնագիտական հմտությունների կատարելագործման և նոր գիտելիքի տրամադրման համար:

Լիտվայի Կառավարությունը զբաղվածների աղքատության կրճատման ուղղությամբ թիրախավորել է ցածր որակավորում ունեցող անձանց և երկարաժամկետ գործազուրկներին՝ ապահովելով նոր հմտությունների և գիտելիքի ուսուցում, վերապատրաստումներ և մարդկային կապիտալի զարգացում (Peña-Casas, Ghailani, Spasova, & Vanhercke, 2019: 84):

ԱՊՅ երկրներում աղքատ է համարվում այն անձը, որի եկամուտը (ծախսերը) պաշտոնապես սահմանված աղքատության ազգային մակարդակից ցածր է: Որոշ երկրներում դա կենսաապահովման նվազագույնն է, իսկ մյուսներում՝ աղքատության գիծը (Кирьянов, 2019: 5):

ՌԴ-ում աշխատող աղքատները հիմնականում այն անձինք են, որոնք երկարաժամկետ հեռանկարում ունեն ցածր կենսամակարդակ՝ առանց կյանքական հարստության, մշակութային և սոցիալական կապիտալի: Վերջիններս չունեն կայուն աշխատանք և հաճախ դուրս են մնում սոցիալական աջակցության համակարգից: Գործնականում աղքատ աշխատողներն ի վիճակի չեն գնել նոր բնակարաններ, մեքենաներ և այլ թանկարժեք գույք, այսինքն՝ չեն կարող լիարժեք կերպով համարվել ժամանակակից արդյունաբերական և բարձր տեխնոլոգիական արտադրանքների սպառող (Амаров, 2018: 25):

Ռուսաստանի Դաշնությունում աշխատողների աղքատության մակարդակը գնահատվում է ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներով և վերջին տարիներին ունեցել է նվազման միտում, թեև

հետձգնաժամային ժամանակահատվածում, մասնավորապես՝ 2015 թվականից հետո, այդ միտումն սկսել է դանդաղել (Аналитический центр при Правительстве Российской Федерации, 2017, октябрь: 5):

Ռուստատը (Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայություն) հաշվարկում է աշխատունակ բնակչության մեջ կենսաապահովման նվազագույնից ցածր աշխատավարձ ստացող աշխատողների տեսակարար կշիռը, որը համընկնում է «աշխատող աղքատ» հասկացության հետ (Радаев, 2000: 25):

1.2 ԶԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՆԱՐԿ

Հայրենական հետազոտողների գիտական աշխատությունների և պետության սոցիալական քաղաքականության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ զբաղվածության և աղքատության հիմնախնդիրներն առանձին-առանձին հետազոտված են, սակայն զբաղված աղքատների հիմնահարցի վերաբերյալ խոր ուսումնասիրությունները՝ ըստ սեռատարիքային կառուցվածքի, աղքատության պատճառների, կրթական մակարդակի, տնտեսական գործունեության տեսակների, գրեթե բացակայում են:

ՀՀ վիճակագրական կոմիտեն (ՎԿ) «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2019» վիճակագրական-վերլուծական զեկույցում նշում է, որ զբաղվածությունը աղքատությունից խուսափելու հնարավորություն է տալիս, քանի որ այն տնային տնտեսություններում, որտեղ չկա որևէ զբաղված անձ, աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակը զգալի բարձր է, իսկ, զբաղված ընտանիքի անդամների թվաքանակի աճին զուգահեռ, աղքատությունը կրճատվում է (Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2019a: 57):

Համաձայն ՀՀ ՎԿ մեթոդաբանության, որի հիմքում ԱՄԿ մեթոդական ցուցումներն են, զբաղված է համարվում այն անձը, որը հետազոտվող շաբաթվա ընթացքում առնվազն մեկ ժամ.

- կատարել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք՝ անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական,
- տարբեր պատճառներով ժամանակավորապես բացակայել է աշխատանքից,
- զբաղված է եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ թողարկված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման համար (Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2019b: 58):

Ամիրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում աղքատությունը գնահատվում է՝ սկսած 1996 թվականից, և ներկայումս կիրառվում է 2009 թ. ներդրված թվով երրորդ մեթոդաբանությունը՝ մշակված Համաշխարհային բանկի հետ համատեղ, ըստ սպառման ազդեցացված ցուցանիշի:

Լշված համատեքստում, համաձայն Համաշխարհային բանկի սահմանման, բացարձակ աղքատությունը տևային տնտեսությունների որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է (Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2019a: 39):

Ըստ աղքատության կարգավիճակի՝ Հայաստանի բնակչությունը բաժանվում է աղքատ և ոչ աղքատ տևային տնտեսությունների: Աղքատներն իրենց հերթին ներառում են՝ չափավոր (շատ) աղքատներ և նրանց թվում՝ ծայրահեղ աղքատներ: ՀՀ-ում աղքատ է գնահատվել այն անձը, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից, չափավոր (կամ շատ) աղքատ՝ աղքատության ստորին գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված՝ աղքատության պարենային գծից (Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, 2019a: 38-39):

Դեռևս 2003 թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում» (ԱՀՌԾ) թեև նշվում է, որ գործազրկությունը աղքատության հիմնական պատճառն է, սակայն միաժամանակ արձանագրվում է, որ ՀՀ-ում շատ աղքատ է (ծայրահեղ աղքատ) նաև զբաղված բնակչության ավելի քան 1/5-րդ մասը, իսկ աղքատ՝ զբաղված բնակչության 45-47%-ը: ԱՀՌԾ 2-րդ գլխում նշվում է նաև, որ զբաղված աղքատները հիմնականում կրթության, մշակույթի և արվեստի ոլորտներում են, որտեղ ամսական միջին աշխատավարձը տարիներ շարունակ երկու և ավելի անգամ ցածր է հանրապետական միջին մակարդակից (ՀՀ կառավարության որոշում, 2003, Օգոստոս):

«Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» շրջանակում զբաղված աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների աճն ապահովելու համար նախատեսվել է նվազագույն աշխատավարձի շարունակական աճ, որպեսզի աղքատության վերին շեմի նկատմամբ դրա հարաբերակցությունն անընդմեջ աճի: Արդյունքում նվազագույն զուտ աշխատավարձը, որը 2010-2012 թթ. կազմում էր աղքատության վերին շեմի շուրջ 89-90%-ը, 2017 թ. պետք է կազմեր շուրջ 160%-ը, 2021 թ.՝ 190%-ը, իսկ 2025 թ.՝ 240%-ը (Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հավելված, 2014, Մարտ: 115):

Համաձայն ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների ապահովման և Հայաստանի պարենային ապահովության ու սնուցման ազգային ռազմավարական ուսումնասիրությունների շրջանակում առաջ քաշված տեսակետի՝ Հայաստանում աշխատանք ունենալը պատշաճ կենսամակարդակ ունենալու և աղքատությունից խուսափելու գրավական չէ, իսկ 2015 թ. զբաղվածների մոտավորապես 24%-ն աղքատ էր, որի պատճառներից է նաև այն, որ բնակչության զգալի մասը զբաղված էր ցածր վարձատրվող կամ սովորաբար աշխատանքներում (Միացյալ ազգերի կազմակերպություն, 2018): Թեև վերոհիշյալ ուսումնասիրությունը գերազանցապես նվիրված է պարենային

ապահովության հիմնախնդիրներին, սակայն դրա շրջանակում նաև բարձրացվել է ՀՀ-ում զբաղվածության և աշխատանքի վարձատրության գեներալային խտրականության, սոցիալական պաշտպանության, բնակչության եկամուտների և դրանց անհավասար բաշխվածության և այլ հարցեր:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ հայրենական հետազոտողների ուշադրության կենտրոնում են Հայաստանում աղքատության և զբաղվածության հիմնախնդիրները, սակայն զբաղված աղքատների հիմնախնդիրը գրեթե չի դիտարկվել:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական ծրագրերի շրջանակներում Չ. Թադևոսյանը, Դ. Գալոյանը, Ն. Կետոյանը և այլք քննարկել են մեր երկրում աղքատության և զբաղվածության հիմնախնդիրները ՀՀ տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից (Թադևոսյան, Գալոյան, Կետոյան և այլք, 2015):

Դ. Հ. Գրիգորյանի հետազոտությունը վերաբերում է աղքատության և գործազրկության հիմնախնդիրներին: Նրա դիտարկմամբ՝ ՀՀ ծայրահեղ աղքատների մեծ մասը քաղաքաբնակներ են, քանի որ գյուղատնտեսությունը թույլ է տալիս խուսափելու ծայրահեղ աղքատությունից, սակայն, միաժամանակ, գյուղաբնակ աղքատները հիմնականում զբաղված են գյուղատնտեսության ոլորտում (Գրիգորյան, 2018):

Աղքատության, ՀՀ բնակչության միջին խավի ձևավորման և սոցիալական այլ հիմնահարցեր է հետազոտել Յու. Մելքումյանը: 2010 թ. հրապարակված հետազոտության մեջ հեղինակը նշում է, որ հարցման մասնակիցներից 49.3%-ը աղքատության պատճառ են համարում աշխատանք չունենալը, 19.3%-ը՝ ծուլությունը, 6.5%-ը՝ ազդեցիկ կապերի բացակայությունը, իսկ 10.9%-ը՝ ցածր աշխատավարձը (Մելքումյան, 2010: 197):

Ա. Մելքումյանը ևս բազմաթիվ գիտական, հետազոտական աշխատություններում արծարծել է աշխատանքի շուկայում առկա հիմնախնդիրները՝ զբաղվածության կառուցվածքի արդյունավետությունը, գործազրկությունը և աշխատավարձի անհավասարությունը, ՀՀ մարզերում փոքր և միջին բիզնեսի զարգացման ազդեցությունը աղքատության կրճատման վրա, զբաղվածության նոր տեխնոլոգիաների կիրառումը և այլն, (Մելքումյան, Թերզյան, Շահբազյան, Կարապետյան, 2013; Մելքումյան, 2017, նոյեմբերի 22-24; Մելքումյան և այլք, 2016) սակայն զբաղված աղքատների հիմնախնդիր խոր ուսումնասիրությունները կրկին բացակայում են:

Այսպիսով, հայրենական գրականության ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ զբաղված աղքատների հիմնախնդիրը հանգամանորեն հետազոտված չէ:

2

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում զբաղված աղքատների ֆենոմենի ուսումնասիրությունն ուղեկցվել է միջազգային և հայրենական մասնագիտական գրականության համեմատական վերլուծությամբ, զբաղված աղքատների և աղքատության ցուցանիշների հաշվարկման ընդունված մեթոդաբանության դիտարկմամբ:

Որպես տեղեկատվության աղբյուր ծառայել են ՀՀ վիճակագրական կոմիտեի, Եվրաստատի, Ռոսստատի, ԱՄԿ-ի, Համաշխարհային բանկի, ՏՀԶԿ և այլ կազմակերպությունների վիճակագրական տվյալները, տվյալների շտեմարանները, պաշտոնական հրապարակումները և հետազոտությունները:

Բացի զբաղված աղքատների վերաբերյալ հրապարակված պաշտոնական տվյալների վերլուծությունից, հետազոտության շրջանակում հաշվարկվել են նաև ՀՀ-ում զբաղված աղքատների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի, սեռի և տարիքային կազմի՝ օգտվելով ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված միկրոտվյալների բազաներից:

Վիճակագրական տվյալների վերլուծության նպատակով կիրառվել են տարբեր ծրագրային փաթեթներ:

3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

3.1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Համաձայն ԱՄԿ տվյալների՝ 2018 թ. ամբողջ աշխարհում զբաղված բնակչության որոշակի մասնաբաժինը եղել է աղքատ. միջին հաշվով շուրջ 8%-ը՝ ծայրահեղ և 13%-ը՝ չափավոր աղքատ, ինչը հաստատում է, որ միայն աշխատանք ունենալու պայմանը տնային տնտեսություններին չի պաշտպանում աղքատության ռիսկից: Պետք է նշել, որ աշխարհում 2018 թ., 2000-ի համեմատ, զբաղվածների մեջ ծայրահեղ աղքատ համարվող բնակչության թվաքանակը նվազել է 18 տոկոսային կետով (2000 թ. այս ցուցանիշը կազմում էր 26%), իսկ չափավոր աղքատների մասնաբաժինը՝ 37 տոկոսային կետով (2000 թ. կազմում էր 50%) (International Labour Organization, 2019, April: 2): Թեև տվյալ ցուցանիշը վերջին տարիներին արձանագրել է բարելավման միտում, այդուհանդերձ, պետությունների մեծամասնության համար առաջսօր այն շարունակում է մնալ առաջնային խնդիրներից մեկը:

2018 թ. ըստ տարածաշրջանների զբաղվածների բաշխվածությունն աղքատության տեսակետից դիտարկելիս պարզ է դառնում հետևյալ օրինաչափությունը. ծայրահեղ և չափավոր աղքատ են համարվել Աֆրիկայի


զբաղված բնակչության համապատասխանաբար 32.6 և 22.2%-ը, Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի՝ 5.3 և 16%-ը, Հյուսիսային Ամերիկայի և Հարավային Ամերիկայի՝ 1.4 և 2.8%-ը: Արաբական պետությունների համար երկու ցուցանիշներն էլ հավասար են՝ 7.9%, հավասար են նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար՝ 1.1% (International Labour Organization, 2019, April: 5):

ԱՄԿ հետազոտությունների համաձայն՝ զբաղված բնակչության աղքատության հիմնահարցի գեղեցիկ բաղադրիչը համաշխարհային ցուցանիշներում էապես չի տարբերվում, քանի որ 2018 թ. տվյալներով՝ զբաղված տղամարդկանց միայն 7.8%-ը և կանանց 8.3%-ն էր աղքատ:

Այնուհանդերձ, Աֆրիկայում սեռերի միջև կա զգալի տարբերություն՝ աղքատ է համարվել զբաղված կանանց 37%-ը, տղամարդկանց՝ 30%-ը (International Labour Organization, 2019, April: 9): ԱՄԿ-ն աշխատանքային աղքատության վերաբերյալ բավականին ուշագրավ վերլուծություն և կանխատեսում է կատարել՝ դասակարգելով երկրներն ըստ եկամտի մակարդակի (գծապատեր 1):

Գծապատկեր 1

Աշխատանքային աղքատությունը՝ ըստ երկրների խմբերի (դասակարգված եկամտի մեծությամբ), 1993, 2018 և 2023 թթ. (%)



Գծապատկեր 1-ի տվյալները փաստում են, որ 2018 թ., 1993-ի համեմատ, ծայրահեղ և չափավոր աշխատանքային աղքատությունը գրեթե բոլոր խմբերի երկրներում նվազել է, սակայն բացառություն է կազմում չափավոր աշխատանքային աղքատության ցուցանիշը՝ ցածր եկամուտ ունեցող երկրների խմբերում:

Այսպիսով, նույն ժամանակահատվածի համար, ծայրահեղ աշխատանքային աղքատությունը ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում նվազել է 31.9 տոկոսային կետով, ցածր եկամտի երկրներում՝ 22.2, միջինից ցածր եկամուտ ունեցողներում՝ 28.3, իսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 38.8 տոկոսային կետով:

Ինչ վերաբերում է չափավոր աշխատանքային աղքատությանը, ապա 2018 թ., 1993-ի համեմատ, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում այն նվազել է 10 տոկոսային կետով: Ցածր եկամտի երկրներում ունեցել ենք հակառակ պատկերը, քանի որ այն աճել է 5.9 տոկոսային կետով, ապա միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում նվազել է 6.3, իսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 18 տոկոսային կետով: Արդյունքում ակնհայտ է դառնում, որ աշխատանքային աղքատության կրճատման տեսակետից ամենամեծ առաջընթացը ցուցաբերել են միջինից բարձր եկամուտ ունեցող խմբի երկրները:

Ըստ ԱՄԿ կանխատեսումների՝ 2023 թ. ծայրահեղ աշխատանքային աղքատությունը ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում կկազմի 8.6% (2018 թ. նկատմամբ նվազելով 1.2 տոկոսային կետով), ցածր եկամուտ ունեցող երկրներում՝ 35.2% (2018 թ. նկատմամբ նվազելով 4 տոկոսային կետով), միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում՝ 9.3% (2018 թ. նկատմամբ նվազելով 2.8 տոկոսային կետով), իսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 0.7% (2018 թ. նկատմամբ նվազելով 0.2 տոկոսային կետով): 2023 թ. չափավոր աշխատանքային աղքատությունը դիտարկվող երկրների խմբերի համար կանխատեսվել է համապատասխանաբար՝ 14, 26.6, 21.3 և 3.3%:

Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել, որ վերոնշյալ դասակարգմամբ Հայաստանը գտնվում է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների խմբում (International Labour Organization, 2019: 76):

Ինչպես նշեցինք, աշխատող աղքատների վերաբերյալ հանգամանալից հետազոտություններ են կատարվում ԱՄՆ-ում: ԱՄՆ վիճակագրության գրասենյակի տվյալներով՝ 2017 թ. շուրջ 39,7 մլն մարդ կամ երկրի բնակչության 12.3%-ն ունեցել է աղքատության պաշտոնական մակարդակից ցածր եկամուտ: Ըստ նույն աղբյուրի՝ երկրում աղքատ բնակչության 39.7 մլն մարդուց 6.9 միլիոնը համարվել է «զբաղված աղքատ» (17.4%), որը, 2016 թ. համեմատ, նվազել է 0,7 միլիոնով:

ԱՄՆ-ում զբաղված աղքատների տեսակարար կշիռն աշխատուժում 2017 թ. կազմել է 4.5%, ինչը զգալիորեն նվազել է Նախորդ տարիների նույն ցուցանիշի նկատմամբ: 1986-2017 թթ. վերոհիշյալ ցուցանիշի միջինը կազմել է

5.8%, իսկ առավելագույն ցուցանիշը դիտարկվել է 2010 թ.՝ 7.2% (U.S. Bureau of Labour Statistics, 2019, April):

Ըստ ԱՄՆ Աշխատանքի վիճակագրության գրասենյակի տվյալների՝ 2017 թ. զբաղված աղքատների ընդհանուր թվաքանակում կանանց տեսակարար կշիռը գերազանցել է, միաժամանակ, կես դրույթով աշխատող բնակչության թվաքանակում զբաղված աղքատներն ավելի մեծ տեսակարար կշիռ են կազմել, քան լրիվ դրույթով աշխատողները:


Այս տեսակետից առավել խոցելի են համարվում աֆրո-ամերիկացիները և լատինամերիկացիները՝ յուրաքանչյուրը 7.9%: Ի տարբերություն սպիտակամորթների, աֆրո-ամերիկացիների և լատինամերիկացիների՝ ասիական ծագմամբ զբաղված աղքատների տեսակարար կշիռն ամենափոքրն է՝ 2.9%, ընդ որում՝ սա միակ էթնիկ խումբն է ԱՄՆ-ում, որտեղ կին զբաղված աղքատների տեսակարար կշիռը կազմում է 2.5%, իսկ տղամարդկանցը՝ 3.2% (U.S. Bureau of Labour Statistics, 2019, April):

Կարելի է պնդել, որ ԱՄՆ-ում բարձրագույն կրթություն ունենալը աղքատությունից խուսափելու երաշխիք է: Նրանք, ովքեր ավելի երկարատև կրթություն են ստանում, սովորաբար ավելի մեծ հավանականությամբ են զբաղեցնում բարձր վարձատրվող աշխատատեղեր: 2017 թ. առնվազն 27 շաբաթ աշխատուժի մեջ ներառված անձանց շրջանում ավագ դպրոցի դիպլոմից ցածր կրթական մակարդակ ունեցողները, զբաղված աղքատների շրջանում, ունեին առավել մեծ տեսակարար կշիռ՝ 13.7%, մինչդեռ, բակալավրի կոչում կամ ավելի բարձր կրթական աստիճան ունեցողները կազմում էին ընդամենը 1,5%-ը (U.S. Bureau of Labour Statistics, 2019, April):

Եվրաստատն իր կայքում հրապարակումներ է ներկայացնում ԵՄ անդամ երկրներում աշխատանքային աղքատության մեջ հայտնվելու ռիսկի վերաբերյալ (գծապատկեր 2):

Գծապատկեր 2

ԵՄ անդամ երկրներում աշխատանքային աղքատության մեջ հայտնվելու ռիսկը, 2013 և 2018 թթ. (%)



Աղբյուրը՝ Eurostat, last update: 09.07.2020, <https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/tespm070/default/table?lang=en>

Ըստ գծապատկեր 2-ի տվյալների՝ 2018 թ., 2013-ի համեմատ, աշխատանքային աղքատության մեջ հայտնվելու ռիսկի ցուցանիշը զգալիորեն աճել է Բուլղարիայում (2.9 տոկոսային կետ), Իսպանիայում (2.4 տոկոսային կետ) և Լյուքսեմբուրգում (2.3 տոկոսային կետ): Միաժամանակ, զգալի կրճատում է

գրանցվել Ռումինիայում (3.1 տոկոսային կետ) և Հունաստանում (2.1 տոկոսային կետ): Ներկայացնենք 2018 թ. աշխատանքային աղքատության մեջ հայտնվելու ռիսկի տեսակետից ամենացածր և ամենաբարձր ցուցանիշ գրանցած ԵՄ երկրների հնգյակը (գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Աղքատության մեջ հայտնվելու ռիսկի տեսակետից ամենացածր և ամենաբարձր ցուցանիշ ունեցող ԵՄ երկրների հնգյակը, 2018 թ. (%)



Կազմել են հեղինակները՝ Եվրաստատի 2018 թ. տվյալների հիման վրա. <https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/tespm070/default/table?lang=en>


Ըստ գծապատկեր 3-ի՝ ԵՄ անդամ 28 երկրներից աշխատանքային աղքատության մեջ հայտնվելու ռիսկի ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ֆինլանդիայում՝ 3.1%, իսկ ամենաբարձրը՝ Ռումինիայում՝ 15.0%:

Ի տարբերություն ԵՄ երկրների՝ ԵԱՏՄ անդամ երկրներում աղքատության գնահատման տարբեր մեթոդաբանություններ են կիրառվում, որի հետևանքով տվյալները դառնում են ոչ համադրելի: Այսպես,

Հայաստանում աղքատ է համարվում բնակչության այն մասը, որի սպառումը ցածր է աղքատության վերին գծից, Բելառուսում՝ բնակչության մասնաբաժինը, որի տնօրինվող ռեսուրսները ցածր են կենսաապահովման նվազագույն բյուջեից, Ղազախստանում՝ կենսաապահովման նվազագույնից ցածր եկամուտ (որոնք ուղղված են սպառմանը) ունեցող բնակչության մասնաբաժինը, Ղրղզստանում՝ բնակչության մասնաբաժինը, որոնց սպառողական ծախսերը ցածր են

աղքատության գծից, Ռուսաստանում՝ բնակչության մասնաբաժինը, որի դրամական եկամուտները ցածր են կենսաապահովման նվազագույնից (Евразийская Экономическая Комиссия, 2019: 54):

ԵԱՏՄ երկրներից դիտարկենք ՌԴ-ն՝ ներկայացնելով աշխատունակ տարիքի բնակչության կենսաապահովման նվազագույնից ցածր աշխատավարձ ստացող աշխատողների թվաքանակի շարժընթացը 2005-2017 թթ. (գծապատկեր 4):



ՌԴ-ում 2017 թ., 2005-ի համեմատ, աշխատող աղքատների թվաքանակը կրճատվել է 4 անգամ, իսկ աշխատողների աղքատության մակարդակը նվազել է շուրջ 3 անգամ, սակայն այդ նվազումը եղել է ոչ հավասարաչափ՝ կապված կենսաապահովման նվազա-

գույնի մեծության և դրա հաշվարկման մեթոդաբանության փոփոխության հետ (Аналитический центр при Правительстве Российской Федерации, 2017, октябрь: 7):


3.2 ՉԲԱՂՎԱԾ ԱՂՔԱՏՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ-ում զբաղված աղքատների վերաբերյալ որոշակի տվյալներ հրապարակում է ՀՀ ՎԿ-ն՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցում: Սակայն պետք է նշել, որ ՀՀ-ում զբաղված աղքատների վերաբերյալ առանձին վիճակագրական-վերլուծական զեկույց չի հրապարակվում:

Անհրաժեշտ է նշել, որ 2010-2013 թթ. զբաղված աղքատների ցուցանիշի վերլուծությանը մասամբ անդրադարձել է նաև Համաշխարհային բանկը՝ Հայաստանում աղքատության գնահատման հաշվետվության շրջանակում (Համաշխարհային բանկ, 2015: 26-30): Համաձայն Համաշխարհային բանկի մոտեցման՝ 2010-

2013 թթ. համաշխարհային ճգնաժամից հետո զբաղվածության աճին և գյուղատնտեսության ոլորտում զբաղված աղքատների թվաքանակի կրճատմանը նպաստել է ծառայությունների ոլորտի առաջընթացը: Եթե 2010 թ. աղքատների 44.4%-ը զբաղված էր գյուղատնտեսության, 36.1%-ը՝ ծառայությունների, իսկ 19.5%-ը՝ արդյունաբերության ոլորտում, ապա 2013 թ. պատկերը փոքր-ինչ փոխվել է. աղքատների 39.9%-ը բաժին է ընկնում գյուղատնտեսության, 41.0%-ը՝ ծառայությունների, իսկ 19.2%-ը՝ արդյունաբերության ոլորտներին (Համաշխարհային բանկ, 2015: 28):

Նախքան զբաղված աղքատների վերաբերյալ ցուցանիշների վերլուծությունը, ներկայացնենք ՀՀ-ում աղքատության մակարդակը 2008-2018 թթ. կտրվածքով (գծապատկեր 5):



Գծապատկեր 5-ի տվյալներից ակնհայտ է, որ ՀՀ-ում 2010 թվականից հետո աղքատության մակարդակն աստիճանաբար նվազման միտում է դրսևորել:

Միաժամանակ, ՀՀ-ում աղքատության ցուցանիշների շարժընթացի վերլուծությունից երևում է, որ 2018 թ., 2008-ի համեմատ, աղքատության մակարդակը նվազել է 4 տոկոսային կետով և կազմել 23.5%: Աղքատության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2010 թ.՝ 35.8%, որից հետո աստիճանաբար ունեցել է կայուն նվազման միտում: 2018 թ. ծայրահեղ աղքատ է եղել բնակչության 1%-ը, որը, նախորդ տարվա նկատմամբ, կրճատվել է 0.4 տոկոսային կետով: Երկրում ծայրահեղ աղքատների գծով ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2011թ.՝ 3.7%:


Ներկայումս ՀՀ Կառավարությունը խիստ ուշադրություն է դարձնում սոցիալական աջակցության միջոցառումների տրամադրման հասցեականությանը և գործուն միջոցառումներ է իրականացնում սոցիալապես խոցելի բնակչության բարեկեցության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես կարելի է նշել, որ 2019 թ. ներդրվեցին

«նվազագույն կենսաթոշակ», «նվազագույն նպաստ» հասկացությունները. նպատակը երկրում ծայրահեղ աղքատության վերացումն է:

2018 թ. չափավոր աղքատների (անձինք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին գծից) տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ կազմել է 9.6%: Չափավոր աղքատների ամենաբարձր ցուցանիշներն արձանագրված են 2010 և 2011 թթ.՝ համապատասխանաբար կազմելով՝ 20.1 և 21.3%, ինչը դեռևս իր վրա էր կրում 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տնտեսական հետևանքները:

ՀՀ-ում աղքատության և զբաղվածության միջև կապի ուսումնասիրության համար դիտարկենք աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակի (գծապատկեր 6):

Գծապատկեր 6
 Ի՞նչն է աղքատության մակարդակը՝ ըստ տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակի,
 2008 -2018 թթ. (%), (15-75 տարիքի բնակչություն)



Կազմել են հետիմնականները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական գեկույցների (2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019) տվյալների հիման վրա, <https://www.armstat.am/am/>


Գծապատկեր 6-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ ՀՀ տնային տնտեսությունները, որտեղ ընտանիքի անդամներից և ոչ ոք զբաղված չէ, աղքատության տեսակետից ավելի խոցելի են, իսկ աշխատողների թվաքանակի աճը մինչև 2-3 և ավելի անձ, չնայած որոշ տարիներին արձանագրված շեղումներին, աղքատության կրճատման նախապայմաններից է: Աշխատող անդամներ չունեցող տնային տնտեսություններում աղքատության մակարդակը 2018 թ. կազմել է 30.2%, որը 16.4 տոկոսային կետով ցածր է եղել 2008 թ. և 2.2 տոկոսային կետով բարձր 2017 թ. նկատմամբ: 2008 թ. աշխատող անդամներ չունեցող տնային տնտեսություններում աղքատության մակարդակը 15-75 տարիքի բնակչության համար 17.1 տոկոսային կետով բարձր էր միջին հանրապետական մակարդակից, իսկ 2018 թ.՝ 8.2 տոկոսային կետով:

տնտեսություններում ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 5.7%, որը 3.8 տոկոսային կետով գերազանցել է միջին հանրապետական մակարդակը: Այսպիսով, նկատելի է, որ աշխատանքի բացակայությունը մեծացնում է աղքատ կամ ծայրահեղ աղքատ լինելու հավանականությունը:

2018 թ. այն տնային տնտեսությունները, որոնք ունեցել են զբաղված մեկ անձ, աղքատության մակարդակը կազմել է 23.1%, երկու անձի դեպքում՝ 22.8%, իսկ երեք և ավելի անձանց դեպքում՝ 17.4%: 2017 թ. վերոնշյալ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 26.1, 23.5 և 24%: 2018 թ., 2008-ի համեմատ, մեկ զբաղված անդամ ունեցող տնային տնտեսությունների աղքատության մակարդակը կրճատվել է 9.4 տոկոսային կետով, երկու զբաղված անդամի դեպքում՝ 3.2 տոկոսային կետով, իսկ երեք և ավելի զբաղված անդամների դեպքում՝ 6.6 տոկոսային կետով:

Աշխատող անդամներ չունեցող տնային տնտեսություններում ծայրահեղ աղքատության մակարդակը 2018 թ. կազմել է 2.8%՝ միջին հանրապետական մակարդակը գերազանցելով 1.9 տոկոսային կետով, իսկ մեկ զբաղված անդամ ունեցող տնային տնտեսություններինը՝ 0.3 տոկոսային կետով, երկու զբաղվածի դեպքում ցածր է եղել միջին հանրապետական մակարդակից 0.4 տոկոսային կետով, երեք և ավելի զբաղված անդամ ունեցող տնային տնտեսություններինը՝ 0.6 տոկոսային կետով (գծապատկեր 7): 2008 թ. աշխատող անդամներ չունեցող տնային

Գծապատկեր 7
ՀՀ-ում ծայրահեղ աղքատության մակարդակը՝ ըստ տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակի, 2008-2018 թթ. (%) (15-75 տարիքի բնակչություն)




Կազմել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական գեկույցների (2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019) տվյալների հիման վրա, <https://www.armstat.am/am/>

Մասնագիտական գրականության՝ տվյալ ոլորտում միջազգային փորձի և ՀՀ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ զբաղվածությունը դեռևս ամբողջական երաշխիք չէ աղքատությունը հաղթահարելու համար: Աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը, ոչ համապատասխան աշխատանքի պայմանները և, առհասարակ, գործատուի կողմից աշխատողների աշխատանքային իրավունքի խախտումները, վարձու աշխատողների աշխատանքային իրավունքի վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկացվածության մակարդակն են այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով վարձու աշխատողները հայտնվում են աղքատության մեջ:

Այսպես, 2018 թ. ՀՀ-ում վարձու աշխատողների շրջանում աղքատության մակարդակը կազմել է 18.2%, որը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 3.2 տոկոսային կետով (գծապատկեր 8): Վարձու աշխատողների աղքատության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2010 թ.՝ 28%: 2018 թ. ինքնազբաղվածների շրջանում աղքատության մակարդակը կազմել է 18.5%, որը, 2008 թ. համեմատ, նվազել է 4.8 տոկոսային կետով: Գծապատկեր 8-ի տվյալներից երևում է, որ ՀՀ-ում 2009-2011 թթ. յուրաքանչյուր երրորդ ինքնազբաղված անձ եղել է աղքատ: Այլ զբաղվածներ դասակարգման մեջ աղքատության մակարդակը կազմել է 17%, ինչը 2008 թ. նկատմամբ կրճատվել է 10.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 8
ՀՀ-ում զբաղված աղքատների տեսակարար կշիռը՝ ըստ զբաղվածության ձևերի, 2008-2018 թթ. (%)



Կազմել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական գեկույցների (2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019) տվյալների հիման վրա, <https://www.armstat.am/am/>

Ուշագրավ է նաև զբաղված աղքատների և ծայրահեղ աղքատների բաշխվածությունը՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի (աղյուսակ 1):

Աղյուսակ 1
 ՀՀ-ում զբաղված աղքատների և զբաղված ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, 2010-2018 թթ. (%)


	Երևան		Այլ քաղաքներ		Գյուղական բնակավայրեր	
	Ծայրահեղ աղքատ, զբաղված	Աղքատ, զբաղված	Ծայրահեղ աղքատ, զբաղված	Աղքատ, զբաղված	Ծայրահեղ աղքատ, զբաղված	Աղքատ, զբաղված
2010	1,2	20	3,2	36,6	0,8	31,8
2011	1,2	19,1	4,0	36,3	1,6	30,0
2012	1,1	18,3	2,6	30,0	1,6	29,1
2013	1,0	20,2	2,2	30,2	1,5	26,5
2014	0,9	19,9	1,3	26,7	1,3	25,4
2015	1,1	20,2	1,7	27,4	1,2	24,7
2016	1,0	18,5	1,3	26,3	0,9	25,9
2017	0,5	18,1	0,6	22,0	1,0	23,0
2018	0,4	15,5	0,5	23,2	0,4	17,6

Կազմել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական գեկույցների (2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019) տվյալների հիման վրա, <https://www.armstat.am/am/>

Երևանաբնակ զբաղվածների շրջանում աղքատության մակարդակը 2010-2018 թթ. նվազել է 4.5 տոկոսային կետով և 2018 թ. կազմել 15.5%, նույն ժամանակահատվածում այլ քաղաքների և գյուղական բնակավայրերում զբաղվածների շրջանում աղքատության մակարդակն առավել զգալի է նվազել՝ համապատասխանաբար 13.4 և 14.2 տոկոսային կետերով: Աղյուսակ 1-ի տվյալները փաստում են, որ երևանաբնակ զբաղվածներն ունեն աղքատության ավելի ցածր ռիսկ, քան գյուղաբնակ և այլ քաղաքներում բնակվող զբաղվածները: 2018 թ., 2010-ի համեմատ, երևանաբնակ զբաղվածների շրջանում ծայրահեղ աղքատության մակարդակը կրճատվել է 0.8 տոկոսային կետով, այլ քաղաքներում բնակվողներինը՝ 2.7 տոկոսային կետով, իսկ գյուղաբնակներինը՝ 0.4 տոկոսային կետով: Ըստ էության, 2018 թ. զբաղվածների շրջանում ծայրահեղ աղքատության մակարդակը, ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, գրեթե հավասարվել է և գտնվում է 0.4-0.5%-ի միջակայքում:

Ներկայացնենք ՀՀ-ում զբաղված աղքատների բաշխումը՝ ըստ սեռի (գծապատկեր 9):

Գծապատկեր 9
Զբաղված աղքատների բաշխումը՝ ըստ սեռի, 2014-2018 թթ. (%)



Զաշվարկը կատարել են հեղինակները՝ ԳԳ ՎԿ տնային տնտեսությունների կենսամակարդակի անվանազերծված տվյալների բազայի հիման վրա: <https://www.armstat.am/en/?nid=205> և <https://www.armstat.am/en/?nid=206>

2018 թ., 2014-ի համեմատ, զբաղված աղքատների՝ ըստ սեռի բաշխումն էապես չի փոփոխվել: 2018 թ. զբաղված աղքատների 53.1%-ը կազմել են տղամարդիկ, իսկ 46.9%-ը՝ կանայք: 2016 թ. երկու սեռերի միջև վերոնշյալ ցուցանիշն ունեցել է չնչին տարբերություն. կանայք կազմել են զբաղված աղքատների 49.3%-ը, իսկ տղամարդիկ՝ 50.7%-ը: Սակայն, 2017 թ. զբաղված աղքատ կանանց տեսակարար կշիռը նվազել է 1.3 տոկոսային կետով, իսկ տղամարդկանցը՝ աճել 1.3 տոկոսով: Նման միտումը պահպանվել է, և արդեն 2018

թ. երկու սեռերի միջև վերոնշյալ ցուցանիշի միջակայքը մեծացել է:

Զբաղված աղքատների տարիքային կազմի ուսումնասիրությունը ևս կարևոր է՝ պարզելու համար, թե որ տարիքային խմբերն են ավելի խոցելի: Ուսումնասիրված տնային տնտեսությունների հաշվարկից ստացել ենք հետևյալ պատկերը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2
ԶԳ-ում զբաղված աղքատների բաշխումը՝ ըստ տարիքային խմբերի, 2014-2018 թթ. (%)

Տարիքային խմբեր					
	15-29	30-44	45-59	60-75	Ընդամենը
2014	18.4%	32.3%	36.2%	13.2%	100.0%
2015	17.3%	34.4%	34.5%	13.8%	100.0%
2016	19.3%	32.9%	33.3%	14.5%	100.0%
2017	17.9%	36.3%	30.9%	14.8%	100.0%
2018	19.9%	38.2%	29.9%	12.0%	100.0%

Զաշվարկը կատարել են հեղինակները՝ ԳԳ ՎԿ տնային տնտեսությունների կենսամակարդակի անվանազերծված տվյալների բազայի հիման վրա: <https://www.armstat.am/en/?nid=205> և <https://www.armstat.am/en/?nid=206>

Վերլուծելով 2014-2018 թթ. զբաղված աղբատների բաշխվածությունն ըստ տարիքային կազմի՝ պարզել ենք, որ առավել խոցելի են ու մեծ տեսակարար կշիռ ունեն 30-44 և 45-59 տարիքային խմբերը: Հետազոտված ժամանակահատվածի համար աշխատանքային աղբատության ամենացածր մակարդակն արձանագրվել է 60-75 տարիքային խմբում: 2018 թ. զբաղված աղբատների մեջ 15-29 տարիքային խումբը կազմել է 19.9%, որը, 2014 թ. համեմատ, աճել է 1.5 տոկոսային կետով:

Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա կարելի է փաստել, որ կրթական մակարդակն անմիջական ազդեցություն ունի աղբատության ցուցանիշի կրճատման վրա: Հետևաբար, ներկայացվել է նաև ՀՀ զբաղված աղբատների բաշխումը՝ ըստ կրթական մակարդակի և սեռի (աղյուսակ 3):

Աղյուսակ 3
ՀՀ-ում զբաղված աղբատների բաշխումը՝ ըստ սեռի և կրթական մակարդակի, 2018 թ. (մարդ)

Կրթության մակարդակ	Տղամարդ		Կին	
	Աղբատ	Ծայրահեղ աղբատ	Աղբատ	Ծայրահեղ աղբատ
	115164	2768	101588	2654
Չունի տարրական կրթություն և գրաճանաչ չէ	157	-	414	-
Չունի տարրական կրթություն, բայց գրաճանաչ է	-	-	222	-
Տարրական կրթություն	854	-	322	-
Հիմնական կրթություն	11877	86	7032	43
Միջնակարգ կրթություն	63730	1608	53156	1529
Նախնական մասնագիտական (արհեստագործական)	2013	327	1263	-
Միջին մասնագիտական (տեխնիկում, քոլեջ)	18602	197	19297	902
Բարձրագույն (բակալավր/մագիստրոս)	17931	550	19881	180
Հետբուհական կրթություն (ասպիրանտուրա, օրդինատուրա, ինտերնատուրա)	-	-	-	-

Հաշվարկը կատարել են հեղինակները՝ ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների կենսամակարդակի անվանազերծված տվյալների բազայի հիման վրա. <https://www.armstat.am/en/?nid=205> և <https://www.armstat.am/en/?nid=206>

Աղյուսակի 3-ի տվյալներից պարզ են դառնում, որ զբաղված աղքատներից տարրական կրթություն չի ունեցել և միաժամանակ գրաճանաչ չի եղել 571 մարդ՝ կազմելով զբաղված աղքատների 0.3%-ը, ընդ որում՝ աղքատ կանայք այս ցուցանիշով 2.6 անգամ գերազանցել են տղամարդկանց: Առանց տարրական կրթության, բայց գրաճանաչ անձինք հետազոտվող ժամանակահատվածում եղել են միայն կանայք՝ կազմելով 222 մարդ կամ ընդամենը զբաղված աղքատների շուրջ 0.1%-ը: Չբաղված աղքատների 0.5%-ն ունեցել է տարրական կրթություն, ընդ որում՝ կանայք կազմել են 27.4%, իսկ տղամարդիկ՝ 72.6%:

Հիմնական կրթություն ունեցողները կազմել են զբաղված աղքատների 8.6%-ը, որի մեջ տղամարդիկ 1.7 անգամ գերազանցել են կանանց: Չբաղված աղքատների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն միջնակարգ կրթություն ունեցողները՝ 54%: Պետք է նշել, որ ծայրահեղ զբաղված աղքատները, որոնք ունեցել են միջնակարգ կրթություն, կազմել են ընդհանուր զբաղված աղքատների 1.4%-ը, իսկ ծայրահեղ աղքատների՝ 58%-ը:

Նախնական մասնագիտական կրթություն ունեցողները կազմել են զբաղված աղքատների 1.6%-ը, ընդ որում՝ տղամարդանց թվաքանակը 1.9 անգամ գերազանցել է կանանց թվաքանակը: Միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք կազմել են 17.6%, ընդ որում՝ կանայք կազմել են 51.8%, իսկ տղամարդիկ՝ 48.2%:

Չբաղված աղքատների 17.3%-ն ունեցել է բարձրագույն կրթություն, ընդ որում՝ 52%-ը կազմել են կանայք, իսկ 48%-ը՝ տղամարդիկ: Մտահոգիչ է, որ բարձրագույն կրթություն ունեցող զբաղված աղքատների մեջ կան նաև ծայրահեղ աղքատներ: Պետք է նշել, որ 2018 թ. տվյալներով՝ հետբուհական կրթությամբ զբաղված աղքատներ չեն արձանագրվել:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չբաղված աղքատների վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հեղինակների ուսումնասիրությունների վերլուծության արդյունքները և համեմատությունները փաստում են, որ ՀՀ-ում զբաղված աղքատների հիմնահարցերը բազմակողմանիորեն ուսումնասիրված չեն:

Ուսումնասիրելով ՀՀ ՎԿ ներկայացրած «զբաղված» և «աղքատ» եզրույթները՝ կարելի է մեր երկրում նույնպես սահմանել «զբաղված աղքատ» հասկացությունը՝ ձևակերպելով այսպես. **«Չբաղված աղքատ» է 15-75 տարիքային խմբում գտնվող այն անձը, որը (հետազոտվող շաբաթում գոնե մեկ ժամ) կատարել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք կամ զբաղված է եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ թողարկված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման համար, բացի դրանից, վերջինիս սպառումը ցածր է եղել աղքատության բացարձակ գծից:**

Արտասահմանյան և հայրենական վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատանքային աղքատության հավանականությունը կարող է բարձրանալ ցածր կրթական մակարդակի, ընտանիքում մեկ աշխատող ունենալու դեպքում, ինչպես նաև՝ կախված ընտանիքի անդամների թվից: Բացի դրանից, աշխատանքային աղքատության վրա կարող է ազդել նաև բնակության վայրը:

ՀՀ-ում աշխատող անդամներ չունեցող տնային տնտեսություններում աղքատության մակարդակը 2018 թ. կազմել է 30.2%, իսկ զբաղված մեկ անձ ունեցող տնային տնտեսություններում՝ 23.1%, երկու անձի դեպքում՝ 22.8%, երեք և ավելի անձանց դեպքում՝ 17.4%: Այսպիսով, տնային տնտեսությունում զբաղված անձանց թվաքանակն դրական ազդեցություն ունի աղքատության մակարդակի վրա:

ՀՀ-ում 2010-2018 թթ. զբաղված աղքատների՝ ըստ բնակավայրի վերլուծությունը փաստում է, որ երևանաբնակ զբաղվածներն ունեն աղքատության ավելի ցածր ռիսկ, քան գյուղաբնակ և այլ քաղաքներում բնակվող զբաղվածները:

ՀՀ-ում 2018 թ. զբաղված աղքատների մեջ միջնակարգ կրթություն ունեցողները կազմել են 54%, միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 17.6%, իսկ բարձրագույն կրթություն ունեցողները՝ 17.3%: Բարձրագույն կրթություն ունեցող զբաղված աղքատների ցուցանիշը մտահոգիչ է և վկայում է բարձրագույն կրթության ոլորտում առկա բացթողումների մասին:

ՀՀ-ում 2014-2018 թթ. զբաղված աղքատների մեջ ամենամեծ տեսակարար կշիռ կազմել են 30-44 և 45-59 տարիքային խմբերը: Հետազոտված ժամանակահատվածի համար զբաղված աղքատների մեջ 15-29 տարիքային խմբի համեմատաբար ցածր մակարդակը կարելի է բացատրել հայկական ավանդույթներով ու ընտանեկան սովորույթներով, քանի որ վերոնշյալ տարիքային խումբը մեծավ մասամբ գտնվում է ծնողների խնամակալության ներքո (ապրում է ծնողների հետ): Աշխատանքային աղքատության ամենացածր մակարդակն արձանագրվել է 60-75 տարիքային խմբում, ինչը, մեր կարծիքով, կարող է պայմանավորված լինել հետևյալով. ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակը սահմանվում է 63 տարեկան հասակից, սակայն անձը կարող է շարունակել աշխատել և միաժամանակ ստանալ աշխատավարձ ու կենսաթոշակ:

Կարծում ենք՝ հանրապետությունում զբաղված աղքատների հիմնախնդրի կարգավորման համար անհրաժեշտ է կիրառել հարկերի տարբերակում՝ կախված ոչ միայն եկամտի չափից, այլ նաև ընտանիքի կազմից, մասնավորապես՝ երեխաների քանակից, ինչը նաև որոշակի չափով կխթանի ծնելիության աճը և կնպաստի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը: Հայաստանյան առանձնահատկությունների և առկա միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ զբաղված աղքատների հիմնախնդիրը պետք է դառնա աղքատության կրճատման համընդհանուր քաղաքականության մի մասը, սակայն ոչ միայն բնակչության կենսամակարդակի բարձրացման, այլև բնակչությանը որակյալ աշխատատեղերով և աշխատանքային պայմաններով ապահովելու համատեքստում:

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ միայն աշխատանք ունենալը դեռևս բավարար պայման ու երաշխիք չէ, որպեսզի տնային տնտեսությունները խուսափեն աղքատության մեջ հայտնվելու ռիսկից, իսկ այն երկրները, որոնք կարողացել են սահմանել նվազագույն սոցիալական երաշխիքների բարձր մակարդակ՝ նվազագույն աշխատավարձի և նպաստների ճիշտ զուգակցման ուղով, զգալիորեն կրճատել են աշխատանքային աղքատությունը:

Աշխատանքային աղքատության հաղթահարման արդյունավետ գործիք է նաև տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում ցկյանս ուսուցման, անձնակազմի պարբերաբար վերապատրաստման, անձնական զարգացման ծրագրերի ներդրումը՝ անհատ-գործատու-պետություն համագործակցության համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգորյան, Դ. Յ. (2018). Աղքատության պատկերը ՀՀ-ում. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. Գիտական հոդվածների ժողովածու (2). Էջ 189-1999
<http://socdev.asj-oa.am/984/1/189-199.pdf>
2. Թադևոսյան, Չ., Գալոյան, Դ., Կետոյան Ն. և այլք. (2015). ՀՀ տարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները. Տնտեսագետ, «Ամբերդ» մատենաշար 140 էջ.
https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Amberd_22.pdf
3. Համաշխարհային բանկ (2015). Ճգնաժամի ազդեցությունը աղքատության կրճատման և ընդհանուր բարեկեցության գործընթացի վրա: Հայաստանում աղքատության գնահատում հաշվետվություն Թիվ 101680-AM
<http://documents1.worldbank.org/curated/en/444851467988874426/pdf/101680-P156449-Box394848B-PUB-LIC-PPA-Armenia-FY15-final-Armenian.pdf>
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելված (2014, Մարտ). «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր» <https://www.gov.am/files/docs/1322.pdf>
5. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում. (2003, Օգոստոս). Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին, ընդ. 8 օգոստոսի 2003 թվականի N994-Ն:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=44725>
6. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2010). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/poverty_2010a_3.pdf
7. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2011). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/poverty_2011a_2.pdf
8. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2012). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/poverty_2012a_2.pdf
9. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2013). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/poverty_2013a_2.pdf
10. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2014). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/5.poverty_2014a_2.pdf
11. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2015). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdf
12. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2016). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf
13. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2017). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf
14. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2018). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_2.pdf

15. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2019). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf
16. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (2019). Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019. <https://armstat.am/file/doc/99516743.pdf>
17. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսամակարդակի անվանագերծված տվյալների բազա. <https://www.armstat.am/en/?nid=205>; <https://www.armstat.am/en/?nid=206>
18. Մելքոնյան, Ա., Թերզյան, Հ., Շահբազյան, Ա., Կարապետյան, Լ. (2013). Չբաղվածության կառուցվածքի արդյունավետությունը և ՀՀ աշխատաշուկայի գործուսային գնահատումը. Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա, N 6(156).
19. Մելքոնյան, Ա. (2017, նոյեմբերի 22-24). Չբաղվածության նոր տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ-ում «Տնտեսության և հասարակության զարգացում 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով ՀՊՏՀ 27-րդ գիտաժողով էջ 55-57. <https://asue.am/upload/files/Gitajoxovi-nyuter.pdf>
20. Մալքոնյան, Մ., Մելքոնյան, Ա., Բահարյան, Ֆ., Առաքելյան, Ա. և այլք (2016). ՀՀ մարզերում փոքր և միջին բիզնեսի զարգացման ազդեցությունը, ՀՀ մարզերում փոքր և միջին բիզնեսի զարգացման ազդեցությունը աղքատության կրճատման վրա. «Ամբերդ» մատենաշար, Տնտեսագետ. https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Melkumyan_31.pdf
21. Մելքոնյան, Յու. Գ. (2010). Միջին խավը Հայաստանում (քանակական վերլուծություն և հիմնական բնութագրիչները). Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 3 . էջ 191-205
22. Միացյալ ազգերի կազմակերպություն (առանց ամսաթվի). ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր <https://www.un.am/hy/agency/UNDP>
23. Միացյալ ազգերի կազմակերպություն (2018). Տեսակետներ և առաջարկություններ 2017թ. Հայաստանի պարենային ապահովության և սնուցման ազգային ռազմավարական ուսումնասիրությունից: 6 քայլ՝ Հայաստանում մինչև 2030թ. սովյալ վերացելու, պարենային ապահովության ուսնուցման վիճակը բարելավելու և գյուղատնտեսության կայունզարգացումը խթանելու համար. ՄԱԿ Կայուն զարգացման նպատակներ. https://www.un.am/up/library/NSR_ExSum_2018-01-10-ARM.pdf
24. Аналитический центр при Правительстве Российской Федерации (2017, октябрь). Работающие бедные в России и за рубежом, Социальный бюллетень. Выпуск №10. <https://ac.gov.ru/archive/files/publication/a/14616.pdf>
25. Ашмаров, И.А. (2018). «Работающие бедные» в современной России. Историко-экономические исследования. Т.19, N4, С. 556-570. <https://cyberleninka.ru/article/n/rabotayuschie-bednye-v-sovremennoy-rossii>
26. Евразийская Экономическая Комиссия (2019). Статистический Ежегодник Евразийского Экономического Союза. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Documents/Stat_Yearbook_2019.pdf
27. Кирьянов, А. (2019). Проблемы сопоставимости данных при оценке бедности в странах СНГ. Семинар по гармонизации статистики бедности для измерения ЦУР 1. 4 декабря 2019 г. Женева, Швейцария.
28. Радаев, В.В. (2000). Работающие бедные: велик ли запас прочности. Экономическая социология. Том 1, № 1. ст. 25-36. <https://publications.hse.ru/mirror/pubs/share/folder/tyzcs4d37n/direct/80157701>
29. Berger, S., Harasty, C. (2002). World and Regional Employment Prospects: Halving the World's Working Poor by 2010, Employment Paper. 2002/38, Employment Strategy Department International Labour Office, Preface. https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_emp/---emp_elm/documents/publication/wcms_114249.pdf
30. Bodea, G., Herman, E. (2014). Factors behind working poverty in Romania, Procedea Economics and Finance. Vol. 15. 711-720. [https://doi.org/10.1016/S2212-5671\(14\)00544-9](https://doi.org/10.1016/S2212-5671(14)00544-9)

31. Cymbranowicz, K. (2018). The “Working Poor” Phenomenon in Europe – A Taxonomic Analysis. *Econometrics*. Vol. 22 N3. 66-83. DOI: 10.15611/eada.2018.3.05.Էջ 66:
32. Eurofound (2004). Working poor in the European Union, European Foundation for the Improvement of Living and Working Conditions, Denmark.
http://publications.europa.eu/resource/cellar/e5307f43-c7d4-4c36-8262-81b72796c8ae.0001.02/DOC_2
33. Eurofound (2020, 04 June). Working Poor. <https://www.eurofound.europa.eu/topic/working-poor#:~:text=According%20to%20Eurostat's%20definition%2C%20individuals%20are%20at%20risk%20of%20in,national%20household%20median%20income%20level.&text=Latest%20Eurostat%20figures%20show%20that,are%20at%20risk%20of%20poverty>
34. Eurostat. (2020, July 09). In-work at-risk-of-poverty rate
<https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/tespm070/default/table?lang=en>
35. Filandri, M., Pasqua, S. & Struffolino, E. (2020). Being Working Poor or Feeling Working Poor? The Role of Work Intensity and Job Stability for Subjective Poverty. *Social Indicators Research*. 147. 1-23. 793-794. DOI:10.1007/s11205-019-02174-0.
36. International Labour Organization (2019, April). The working poor - or how a job is no guarantee of decent living conditions: A study based on ILO's global estimates of employment by economic class. ILO Spotlight on Work statistics. N6. https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_696387.pdf
37. International Labour Organization (2019). World Employment Social Outlook: Trends 2019.
https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms_670542.pdf
38. Kapsos, S. (2014). Estimating growth requirements for reducing working poverty: Can the world halve working poverty by 2015? Employment Trends Unit Employment Strategy Department. p 26.
https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_emp/---emp_elm/documents/publication/wcms_114248.pdf
39. Legros, M. (2019). In-Work Poverty. ESPN Thematic Report on In-Work Poverty. France.
40. Lohmann, H., Marx, I. (2018). Handbook on In-Work Poverty. UK. Edward Elgar Publishing Limited.
DOI: <https://doi.org/10.4337/9781784715632>, Pages: 528.
41. Nomaan, M. (2001, May). The Size of the Working Poor Population in Developing Countries, Employment Paper. 2001/16. Employment Sector Employment Strategy Department.
https://ilo.org/wcmsp5/groups/public/---ed_emp/---emp_strat/documents/publication/wcms_079076.pdf
42. Peña-Casas, R., Ghailani, D., Spasova, S. & Vanhercke, B. (2019). In-Work Poverty in Europe: A Study of National Policies. European Social Policy Network (ESPN) European Union.
<https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/e7b9c284-80fe-11e9-9f05-01aa75ed71a1/language-en>
43. Peña-Casas, R., Latta, M. (2004). Working Poor in the European Union, European Foundation for the Improvement of Living and Working Conditions, Denmark.
http://publications.europa.eu/resource/cellar/e5307f43-c7d4-4c36-8262-81b72796c8ae.0001.02/DOC_2
44. U.S. Bureau of Labour Statistics (2019, April). A profile of the working poor, 2017.
<https://www.bls.gov/opub/reports/working-poor/2017/home.htm>

ՅԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

տ.գ.թ., դոցենտ Սարիա Արմենակի Սահակյան

Տիկին Սահակյանն աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Աշխատանքի տնտեսագիտության ամբիոնում և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հրավիրյալ փորձագետ է: Յեղինակ և համահեղինակ է մոտ չորս տասնյակ գիտական հրապարակումների՝ 35-ից ավելի գիտական հոդված, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1 դասախոսության տեքստ:

- Էլ. հասցե՝ sahakyan_maria@yahoo.com

տ.գ.թ., դոցենտ Լուսինե Վահագնի Կարապետյան

Տիկին Կարապետյանն աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Աշխատանքի տնտեսագիտության ամբիոնում և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հրավիրյալ փորձագետ է: Յեղինակ և համահեղինակ է երկու տասնյակից ավելի գիտական հրապարակումների՝ 20-ից ավելի գիտական հոդվածներ, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1 կոլեկտիվ մենագրություն, 3 դասախոսությունների տեքստ:

- Էլ. հասցե՝ lusine.karapetyan@asue.am

ՀՐԱՊԱՐԱԿՈՂԻ ՄԱՍԻՆ

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը (ՖԷՀ) շահույթ չհետապնդող գերմանական քաղաքական հիմնադրամ է, որի նպատակն է սոցիալ-ժողովրդավարության արժեքների տարածումը: Հիմնադրամը, որի կենտրոնական գրասենյակները գտնվում են Բեռլինում և Բոնոն, հիմնադրվել է 1925 թվականին և այդպես է անվանվել ի պատիվ ժողովրդավարական ճանապարհով ընտրված Գերմանիայի առաջին նախագահի՝ Ֆրիդրիխ Էբերտի: Այսօր ՖԷՀ-ը ունի մասնաճյուղեր ավելի քան 90 երկրում և գործունեություն է իրականացնում ավելի քան 100 երկրում: Թբիլիսիում գտնվող Հարավային Կովկասի համագործակցության գրասենյակը կոորդինացնում է ՖԷՀ-ի գործունեությունը Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում: Բոլոր երեք երկրներում ՖԷՀ-ը նպատակ ունի խթանելու ժողովրդավարությունը, խաղաղությունը, սոցիալական արդարությունը, քաղաքական երկխոսությունը՝ կրթության և հետազոտությունների միջոցով: ՖԷՀ-ի գործընկերներն են տարբեր ՀԿ-եր, գիտնականներ և փորձագետներ, լրագրողներ, որոշ երկրների խորհրդարաններ, նախարարություններ և քաղաքական որոշում կայացնող պաշտոնյաներ:

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ / Հայաստանյան գրասենյակ

Հասցե՝ Մոսկովյան փողոց 31 / 0002 Երեւան

Պատասխանատու՝

Ֆելիքս Յեթթ

Տարածաշրջանային համակարգող

Հեռ՝ +374 10 53 69 13

<http://www.fes-caucasus.org/>

Հրապարակումները պատվիրել՝

- Էլ. հասցե՝ info@fes.am

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի կողմից հրապարակված նյութերի կոմերցիալ օգտագործումը չի թույլատրվում:

ՉՔԱՂՎԱԾ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՖԵՆՈՄԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Սույն հետազոտությունն իրականացվել է զբաղված աղքատների ֆենոմենը ուսումնասիրելու, Հայաստանի համար այն սահմանելու, ինչպես նաև վերոնշյալ հիմնահարցի վերաբերյալ արտասահմանյան փորձը վերլուծելու և ՀՀ-ում այս խմբի առանցքային հիմնախնդիրները բացահայտելու նպատակով:



Հեղինակները հետազոտության շրջանակներում ներկայացրել են «զբաղված աղքատներ» հասկացության տեսական մոտեցումները, աշխարհի մի շարք երկրներում այդ ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը, վերլուծել են հայրենական և միջազգային վիճակագրական տվյալները, ինչպես նաև հաշվարկել են զբաղված աղքատների բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի, սեռի և տարիքի՝ օգտվելով ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքոված միկրոտվյալների բազաներից:



Կատարված հետազոտության արդյունքները փաստել են, որ ցածր կրթական մակարդակը, ընտանիքում զբաղված անդամների թիվը, բնակության վայրը կարող են ազդել աշխատանքային աղքատության մակարդակի վրա: Միաժամանակ, աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը, ոչ համապատասխան աշխատանքի պայմանները, առհասարակ, վարձու աշխատողների աշխատանքային իրավունքի վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկացվածությունն այն հիմնական պատճառներն են, որոնց հետևանքով վարձու աշխատողները կարող են հայտնվել աղքատության մեջ: Չբաղված աղքատների հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ հեղինակները ներկայացրել են համապատասխան առաջարկություններ:

Թեմային առնչվող հավելյալ տեղեկություն հասանելի է այստեղ՝
www.fes.de/stiftung/internationale-arbeit